

ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԳԻՐ ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱՐԱԳՏՈՁՅԱՆ

Սեպագիր լեզուները վանկագրերին զուգահեռ օգտագործում են նաև գաղափարագրեր, ընդ որում, ոչ միայն գոյականների, ածականների և խոսքի այլ մասերի, այլ նաև հատուկ անունների, տվյալ դեպքում անձնանունների գրության ժամանակ: Բացառություն չի կազմում նաև ուրարտերենը, որտեղ անձնանունները գրելիս օգտագործվել են մի քանի գաղափարագրեր:

Ուրարտական գաղափարագիր անձնանունների ուսումնասիրությունը և դրանց կապակցությամբ կատարված դիտողությունները, մեր կարծիքով, լույս են սփռում ոչ միայն ուրարտագիտության, այլև հայագիտության որոշ հարցերի պարզաբանման և լուսաբանման վրա:

Այդպիսի գաղափարագիր անձնանուններից են հետևյալները.

1) ¹TUR-Tata (Կրտսեր Թաթա): Հանդիպում է Կարմիր բլուրից հայտնաբերված կավե սալիկներից մեկի վրա¹: Ի. Դյակոնովի կարծիքով TUR գաղափարագիրը հիշյալ անձնանվան սկիզբն է, իսկ նրան հաջորդող վանկագիրը՝ նույն անձնանվան հնչյունային լրացումը՝ ¹TUR-ta-ta-a-še², տրված եզակի թվի էրգատիվ հոլովով, ուստի թարգմանված է՝ «TUR-թաթան»³: Սակայն նույն Կարմիր բլուրից հայտնաբերված մեկ այլ կավե սալիկ⁴, որտեղ հանդիպում է համանման մի անձնանուն՝ ¹Ta-ta-a-še⁵, այսինքն՝ «թաթան»⁶, ցույց է տալիս, որ վերոհիշյալ դեպքում էլ գործ ունենք միևնույն Թաթա անձնանվան հետ, իսկ նրան նախորդող TUR գաղափարագիրը տվյալ դեպքում կարելի է ընկալել որպես «Փոքր», «Կրտսեր», ի տարբերություն մեկ այլ Թաթայի, որը, հավանաբար, եղել է «Ավագ»: Այս դեպքում կարելի է ենթադրել, որ նրանք թերևս եղել են հայր ու որդի: Նման երևույթը (հոր ու որդու միևնույն անունը կրելը) խորթ չէ ուրարտացիներին⁷, եթե նկատի ունե-

¹ Г. А. Меликишвили. Урартские клинообразные надписи. М., 1960: *Լրացումները նայել*.—Вестник древней истории, 1971, № 3, 4, (այսուհետև՝ УКН), № 461, տող 1.

² И. М. Дьяконов. Урартские письма и документы, М.—Л., 1963 (այսուհետև՝ УПД), № 6, տող 1, որտեղ անձնանվան բացահայտիչը (տառադարձության մեջ) տրված է III-ով: Հմմտ. УКН, № 461, տող 1:

³ УПД, էջ 35: Ուրարտերենի եզակի թվի էրգատիվ հոլովով տրված բառերը հայերեն թարգմանելիս տրվում են եզակի թվի ուղղական հոլովի որոշյալ առումով:

⁴ В. Б. Пиотровский, Ванское царство (Урарту), М., 1959 (այսուհետև՝ ВЦ), XXXIII, № 1:

⁵ УПД, № 4, լս, տող 6, որտեղ անձի բացահայտիչը նույնպես տրված է III-ով: Անձի բացահայտիչի հետո՝ քիչ ցածր, հազիվ նշմարելի բառանշատման նշանը (երկու սեպիկ) տառադարձության մեջ մենք բաց ենք թողնում:

⁶ УПД, էջ 34:

⁷ УПД, էջ 62: Ի. Դյակոնովը այստեղ հարկ է համարում նշել, որ հնադարյան Մերձավոր արևելքում, սովորաբար, հայր ու որդի կարող էին ունենալ միևնույն անունը, եթե որդին ծնվում էր հոր մահվանից հետո: Այս սովորույթը պահպանվել է նաև հայ ժողովրդի մոտ:

նանք, որ միևնույն կավե սալիկի վրա, ուր պահպանված է ուրարտական ար-
քայորդու կնիքի դրոշմը, կարդացվում է. ⁸ Ru-sa-a-i ⁹ Ru-sa-he⁸, այսինքն՝
«Ռուսա Ռուսայորդու»⁹: Հետևաբար, վերոհիշյալ ¹⁰ TUR-ta-ta-a-še տրտա-
հայտութունը կարելի է դիտել որպես ¹¹ TUR-Ta-ta-a-še և թարգմանել
«Կրտսեր Թաթան»:

Ինչ վերաբերում է Թաթայի «ազգային» պատկանելիությանը, ապա կա-
րելի է ենթադրել, որ նա ուրարտացի է, քանի որ նրա անունը, ըստ Ի. Դյակո-
նովի, կազմված է ներգործական սեռի *tatu- «սիրել» (Հմմտ. խուռ. tad-
«սիրել») բայից կազմված կրավորական տիպի հարակատար դերբայով՝
*tataje «սիրված»¹⁰, Իհարկե, չի բացառվում նաև այն հանգամանքը, որ նը-
ման անձնանուն կարող էին կրել նաև ոչ-ուրարտացիները, քանի որ այդպիսի
անուն (¹² Tata) հանդիպում է ինչպես ասորեստանյան սեպագիր տեքստերում՝
Շամշի-Ադադ V-ի (823—811 թթ. մ. թ. ա.) մոտ¹¹, որը կրում էր Մեդիայի
լեռնային մասի իշխաններից մեկը¹², այնպես էլ հայկական աղբյուրներում
(Թաթ կամ նվազական -ուլ մասնիկով՝ Թաթուլ)¹³, որով կոչվում էր նշանա-
վոր հայ իշխաններից մեկը՝ Թաթ Կամսարականը¹⁴ կամ, որ նույնն է՝ Թաթուլ
Կամսարականը¹⁵:

2) ¹⁶ Hal-di-ERÈ (Խալդիբուրա): Հանդիպում է Կարմիր բլուրից հայտ-
նաբերված կավե սալիկներում, ինչպես ¹⁷ Hal-di-ERÈ ձևով¹⁶, որտեղ գաղա-
փարագիրը իր մեջ ներառել է ոչ միայն անձնանվան երկրորդ բաղկացու-
ցիչ մասը՝ bura «ստրակ»¹⁷ կամ «ծառա»¹⁸ բառը, այլև նրա էրգատիվ հո-
լովի ցուցիչով տրված անհրաժեշտ ձևը՝ buraše «ստրուկը», «ծառան», այն-
պես էլ հնչյունալին լրացումներով՝ ¹⁹ Hal-di-ERÈ-a-ne¹⁹ (տրված եղակի

⁸ УПД, № 4, կնիք, տող 1, որտեղ անձնանունների բացահայտիչները (տառադարձության մեջ) նույնպես տրված են m-ով: Հմմտ. УКН, № 456, կնիք, տող 1:

⁹ УПД, էջ 34:

¹⁰ УПД, էջ 94, ծան. 1, որտեղ *tatu- վերականգնված ձևը տրված է որպես *tat- «սիրել», սակայն վերջին ձևի նման թարգմանությունը առանց ներգործական սեռի -u- ցուցիչի հնարավոր չէ: Ընդ որում, *tataje «սիրված» ածականը տրված է որպես *tatae, սակայն, առանց թարգմա- նության:

¹¹ И. М. Дьяконов, Ассиро-вавилонские источники по истории Урарту («Вест- ник древней истории», 1951, № 2, 3, 4) (այսուհետև՝ АВИИУ), № 34:

¹² АВИИУ, № 34, ծան. 13:

¹³ Զ. Զ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. II, Երևան, 1944, էջ 257: Ան- հրաժեշտ ենք համարում նշել, որ այստեղ Զ. Աճառյանը Թաթուլ անձնանունը թեև բխցնում է րաթ ձևից, սակայն ենթադրում է, որ «թաթուլ» բառը հայերենում նշանակում է «անասունների առչելի ոտքը»: Մեր կարծիքով, հայերենի «թաթ» և «թաթուլ» բառերը Թաթ և Թաթուլ անձնա- նունների հետ ոչ մի կապ չունեն:

¹⁴ Աղապարայ փարպեցույ Պատմութիւն Հայոց և Թուրք առ Վահան Մամիկոնեան, Տփղիս, 1904, էջ 86:

¹⁵ «Նդիշ է Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին», Երևան, 1957, էջ 193, ծան. 6:

¹⁶ УПД, № 7, лс, տող 15, որտեղ անձնանվան բացահայտիչը (տառադարձության մեջ) տրված է m-d-ով: Հմմտ. УКН, № 462, лс, տող 15:

¹⁷ УКН, էջ 392:

¹⁸ F. W. König, Handbuch der chaldischen Inschriften, Graz, 1955—1957 (այսուհետև՝ HChI), S. 178:

¹⁹ УПД, № 7, лс, տող 15, որտեղ անձնանվան բացահայտիչը (տառադարձության մեջ) դարձյալ տրված է m-d-ով: Հմմտ. УКН, № 462, лс, տող 5:

թվի ուղղական-երկրորդ հոլովով) և ¹⁰Hal-di-ERÈ-de²⁰ (տրված եզակի թվի ուղեորական-առաջին հոլովով), որը հնարավոր է վերականգնել նաև մեկ այլ կավե սալիկի վրայի մնասված հատվածում²¹ (¹⁰Ha[-di]-ERÈ(?) -de)²²,

Սույն Խալդիբուրա անունը կրող հիշյալ երեք անձնավորութուններից երկուսը հանդես են գալիս որպես ուրարտական պաշտոնյա, մեկը՝ «հաշվի մարդ» (LÜNIG-ŠID)²³, թերևս՝ «հաշվապահ»²⁴ մյուսը՝ «դրամի մարդ» (LÜKUG^{MEŠ})²⁵, թերևս, «ոսկերիչ»²⁶, իսկ երրորդը, հավանաբար, ինչ-որ հանցագործութուն կատարած անձնավորութուն, որի մասին ասված է. «Այժմ բանո(?) (է) ղցված»²⁷ (bi-né: za-ab-ze-jè-e-de hu-šā-a-jè-e)²⁸,

Եթե նկատի ունենանք, որ Խալդիբուրա անձնանունը կազմված է ուրարտական դիցարանի գերագույն աստծու անունով և գաղափարագիր ERÈ (իմա՝ bura) «ստրուկ» կամ «ծառա» բառով, որը վկայված է նաև Արգիշթե I-ի (786—764 թթ. մ. թ. ա.) Խորխոսյան տարեգրության երկրորդ սյունակում հանդիպող ¹I[š]-[-]-lu-bu-ra-a-ne²⁹ (Ուբուրա երկրի արքայի) անվան մեջ (տրված եզակի թվի ուղղական-երկրորդ հոլովով), որը կարելի է վերականգնել նաև հիշյալ տարեգրության կրկնօրինակում³⁰, ապա կարող ենք ենթադրել, որ թե՛ Խալդիբուրա անունը կրող պաշտոնյաներն ու հանցագործը, թե՛ Իշ(.)ուբուրա անվամբ հայտնի արքան³¹, ըստ երևույթին,

20 УПД, № 3, лс, տող 2, որտեղ անձնական բացահայտվել (տառադարձության մեջ) սխալմամբ տրված է միայն m-ով (m.d-ի փոխարեն), իսկ de վանկը տառադարձված է di: Հմմտ. УХН, № 457, лс, տող 2:

21 ВЦ, XXXII, № 1, УПД, № 2, лс, տող 4: Հմմտ. УХН, № 333, лс, տող 4, նշենք, որ Գ. Մելիքիշվիլին այստեղ ERÈ գաղափարագիրը բաց է թողել, հավանաբար, ենթադրելով, որ Ի. Դյակոնովի վերծանումը կարող է ճիշտ լինել:

22 УПД, էջ 94, որտեղ անձնական բացահայտվել (տառադարձության մեջ) դարձյալ տրված է m.d-ով, իսկ ERÈ գաղափարագիրը տպագրական վրիպակով հանդես է եկել որպես ERE (առանց վերջին նշանի):

23 УПД, № 2, лс, տող 4: Հմմտ. УХН, № 333, лс, տող 4:

24 Հ. Հ. Կարազյուրյան, Անհայտ գաղափարագրեր հայտնի կոթողների վրա (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1976, № 10, էջ 87):

25 УПД, № 3, лс, տող 2: Հմմտ. УХН, № 457, лс, տող 2:

26 Հ. Հ. Կարազյուրյան, Անհայտ գաղափարագրեր հայտնի կոթողների վրա..., էջ 86:

27 Հ. Հ. Կարազյուրյան, Ուրարտական աղբյուրները Հայկական լեռնաշխարհի և հարևան պետությունների մասին («Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա», հ. I, Երևան, 1981) (այսուհետև՝ ՈւԱ), № 39, էջ 93:

28 УПД, № 7, лс, տող 16—17, որտեղ (տառադարձության մեջ) ze-ն տրված է որպես zi, իսկ de-ն՝ որպես di: Հմմտ. УХН, № 462, лс, տող 16—17:

29 F. E. Schulz, Mémoires sur le lac de Van et ses environs („Journal Asiatique“, IX, Paris, 1840) (այսուհետև՝ MLVE), III (հմմտ. УХН, № 127, II, տող 41, որտեղ ¹I[š] վանկը սխալմամբ տառադարձված է Is(?), որը հշտված է Ֆ. Քյունիգի կողմից (HChI, № 80, § 4, VI; Տե՛ս նաև ՈւԱ, № 22, էջ 60):

30 C. F. Lehmann-Haupt, Corpus Inscriptionum Chaldicarum, I—II, Berlin und Leipzig. 1928—1935 (այսուհետև՝ ClCh), XXVII (հմմտ. УХН, № 128, A2, տող 29=HChI, № 81, § 4, VI):

31 Մեր կարծիքով, Իշ(.)ուբուրա արքան իշխում էր Հևտադայի Գուգարքի Տաշիր գավառի մի մասում, քանի որ Ուբուրդա (KURUburda) երկրի անունը (MLVE, III, հմմտ. УХН, № 127, III, տող 40, 41=HChI, № 80, § 4, VI) պահպանվել է Տաշիրի Հոբարձի գյուղի անվան

ուրարտացիներ են, թեև չի բացահայտվում նաև այն հանգամանքը, որ նրանք կարող էին լինել և ոչ-ուրարտացիներ, քանի որ ուրարտական դիցաբանի գերագույն աստծու անունով կազմված անձնանուններ են կրել ինչպես ասուրները (Խալդինասիր, Խալդիբուսուր, Խալդիբինի, Խալդիբուսուր, Խալդիբիլայի, Խալդիբիմանի և այլն)³²—Սարգոն II-ի (721—705 թթ. մ. թ. ա.) և Ասարխադդունի (680—669 թթ. մ. թ. ա.) ժամանակ, այնպես էլ ոչ-ասուրները (Խալդիդայա)³³—Աշուրբանակալի (668—635 թթ. մ. թ. ա.) օրոք և հայերը (Խալդիտա)³⁴—Դարեհ I-ի (522—486 թթ. մ. թ. ա.) գահակալության սկզբին:

3) 'Isaga-DUMU (Շագախե, Շագայորգի): Վկայված է Վանի պեղումներից հայտնաբերված Ռուսա II -ի (685—645 թթ. մ. թ. ա.) ժամանակաշրջանի կավե սալիկներից մեկում³⁵, մի ընդարձակ պարբերության մեջ, որի սկիզբը ուրարտագիտական ոչ միայն նախկին, այլև վերջին շրջանի ուսումնասիրություններում տրվում է ուրարտերենի լեզվական օրինաչափություններին հակասող տառադարձությամբ, ուստի գիտական եզրակացությունների փոխարեն առաջ են քաշվում չհիմնավորված ենթադրություններ, որոնք ոչ մի կերպ ապացուցել հնարավոր չէ³⁶: Այսպես, օրինակ, Գ. Մեյլեքչյվին, հիմնական-

մեջ՝ Հ.Հ. Կարագյոզյան, Արևելյան Հայաստանի ուրարտական տեղանունները (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1978, № 10, էջ 66—67), իսկ հիշյալ արքայի նստավայր Երզնա (URU Erzna) քաղաքի անունը (MLVE, III, հմտ. ՄԿՈ, № 127, II, տող 42=HChI, № 80, § 4, VI)՝ Արգուի>Արգվի գյուղի անվան մեջ՝ Օ. Օ. Карагёзян, Локализация урартского царского города Арцахку (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1976, № 5, էջ 86), Հ.Հ. Կարագյոզյան, Արևելյան Հայաստանի ուրարտական տեղանունները..., էջ 66:

³² АВИИУ, № 80.

³³ АВИИУ, № 80.

³⁴ DBeh., III, 79 (R. G. Kent, Old Persian. Grammar, Texts, Lexicon, New Haven, 1953, p. 126).

³⁵ УПД, էջ 134 (XIV, № 1).

³⁶ Նշենք, որ Արգիշթե I-ի Խորխոռյան տարեգրության մեջ հիշատակված Իշկիգուլու (KUR Išqigulu) երկրի (MLVE, VI, հմտ. ՄԿՈ, № 127, V, տող 49=HChI, № 80, § 12, VII) անունը, որը վկայված է նաև նույն արքայի Մարմաշենում գտնված արձանագրության մեջ (ՄԿՈ, № 133, տող 5=HChI, № 88, տող 5), համեմատելով Ռուսա II-ի ժամանակաշրջանի տվյալ կավե սալիկի արձանագրությունում հիշատակված Իշկուգուլու-ուլիե (Išqugu-ulīe) ցեղի կամ նրա բնակեցրած երկրի (УПД, № 12, лс, տող 2) անվան հետ, առաջին հայացքից կարելի էր կարծել, որ խոսքը երկու դեպքում էլ միևնույն երկրի մասին է: Եվ քանի որ Իշկիգուլու երկիրը գտնվել է Շիրակից հյուսիս, ինչպես ենթադրել է Մ. Նիկոլսկին (М. В. Никольский, Клинообразные надписи Закавказья, «Материалы по археологии Кавказа», т. V, М., 1896, с. 86, 89), մի տեսակետ, որը այնուհետև ընդունեցին Բ. Գիտտրովսկին (Б. Б. Гиттотровский, История и культура Урарту, Ереван, 1944, с. 66, 67, ВП, с. 62, 69), Ն. Ադոնցը (N. G. Adontz, Histoire d'Arménie, Paris, 1946, с. 202), Գ. Մեյլեքչյվին (ՄԿՈ, с. 432, Г. А. Мелникишвили, Наир-Урарту, Тбилиси, 1954, с. 64), Ֆ. Քյոնիգը (HChI, էջ 97, ծան. 4, 180), Ն. Հարությունյանը (Н. В. Арутюнян, Бийниги (Урарту) Ереван, 1970, с. 398) և ուրիշներ, ապա կարելի էր կարծել, որ Իշկուգուլու-ուլիե երկիրը ևս գտնվել է միևնույն՝ Շիրակից հյուսիս ընկած տարածքում: Սակայն Ի. Դյակոնովը ենթադրում է, որ Իշկիգուլու և Իշկուգու-ուլիե երկրները տարբեր երկրներ են (իրոք, դրանք կարող էին լինել և տարբեր) և գրում է, որ դրանք մարզեր են Անդրկովկասում (УПД, էջ 95): Միաժամանակ նկատի ունենալով Իշկուգու-ուլիե երկիրը, նշում է. «Այս երկրի արքայի որդին, հավանաբար, գտնվում էր ուրարտական ծառայության մեջ որպես փոխարքա» (УПД, էջ 80): Թե որքան անհիմն են այս ենթադրությունները, կերևա ստորև, սակայն, սկզբից նշենք, որ եթե Արգիշթե I-ի հիշատակված Իշկիգուլու երկիրը գտնվել է Շիրակից հյուսիս, ապա Ռուսա II-ի ժամանակաշրջանի Իշկուգու-ուլիե ցեղը կամ նրա բնակեցրած տարածքը գտնվել է Ուրմիա լճից հարավ՝ Մանա երկրում:

նում օգտվելով 'կ. Ֆ. Լեման-Հաուպտի աշխատություններից, հիշյալ հատվածը տառադարձում է հետևյալ կերպ. a-ku-ki MU 'ru-sa-a 'ar-giš-te-ḫi 'sa-ga-áš-tar-a LUGÁL 'iš-qu-gu-ul-ḫi-e u-la-bi KURma-na-i-di 'a-ta-'a-a e-si-a a-še <...>³⁷, եվ թարգմանում է միայն սկիզբը՝ «akuki տարում» և վերջը՝ «Սագաշթարան՝ Իշկուգուլխիի արքան, Կնաց դեպի Մանա երկիրը: Աթա <...>»³⁸:

Միևնույն հատվածը Ֆ. Քյոնիգը, դարձյալ օգտվելով Կ. Լեման-Հաուպտից, տառադարձում է այսպես. a-ku(?) -ki MU 'Ru-sa-a-ni 'Ar-giš-t[i-bi] 'Ša-ga-'a(?) -tar-a KURiš-qu-gu-ul-ḫi-e ú-la(?) -qu(?) KURMa-na-i-di 'A-ta-'a-a e(?) -si-i-a KUR <...>³⁹, եվ թարգմանում է. «Տարում(?)... Ռուսան՝ Արգիշթորդին, Շագա՝թարային՝ Իշկուգուլու երկրի մարդուն: ...Մանա (երկր)ում: Աթա՝ա տեղի (?) վրա, երկիրը <...>»⁴⁰:

Ի. Դյակոնովը հիշյալ հատվածը տառադարձում է այսպես. a-ku-ke MU mRu-sa-a URU mAr-giš-t[e-b]i-n[é] mŠa-ga DUMU tar-a LUGAL Iš-qu-gu-ul-ḫi-e ú-la-b[é] KURMa-na-i-di mA-ka-'a-a e-si-i a-še <...>⁴¹, եվ թարգմանում է. «Տարին, որում Ռուսայի քաղաքից Արգիշթյան (որդու), Շագան՝ ավագ որդին Իշկուգուլյան արքայի, եկավ դեպի Մանա, Աթա՝ի տեղը, երբ <...>»⁴²:

Գ. Մելիքիշվիլին ընդունելով Ի. Դյակոնովի հիշյալ տառադարձությունը, բայց հետևելով սեպագիր վանկերի ընթերցման հին ձևերին, տալիս է իր վերծանությունը. a-ku-ki MU 'ru-sa-a URU 'ar-giš-t[e-b]i-n[i] 'ša-ga DUMU tar-a LUGAL iš-qu-gu-ul-ḫi-e ú-la-b[i] KURma-na-i-di 'a-ka-'a-a e-si-i a-še <...>⁴³: Եվ աննշան ուղղումներով թարգմանում է այսպես. «Տարին, որում Ռուսա (արքայի) քաղաքից՝ Արգիշթի (որդու), Շագան՝ ավագ որդին Իշկուգուլյան, եկավ դեպի Մանա երկիրը՝ Աթա տեղը, երբ <...>»⁴⁴:

37 УКН, № 286, տող 1—4: Վերջին երկու բառերը ավելացվում են մեր կողմից՝ այլ հրատարակությունների հիման վրա: Մեջբերված հատվածում կան վրիպակներ և սխալ տառադարձումներ:

38 УКН, էջ 348: Հատվածի ոչ ճիշտ տառադարձության պատճառով թարգմանությունը անբավարար է:

39 HChI, № 131, տող 1—4: Մեջբերված հատվածում նույնպես կան վրիպակներ և սխալ տառադարձումներ:

40 HChI, էջ 160—161:

41 УПД, № 12, лс, տող 1—4: Նկատենք, որ տվյալ հատվածի իրականում LUGAL գաղափարագիրը տպագրական վրիպակի պատճառով հանդես է եկել որեպս LUGAL, որը սեպագիր գրությամբ խիստ տարբերվում է նախորդից: Մեջբերված հատվածում կան բավականաչափ սխալ տառադարձումներ:

42 УПД, էջ 38—39: Տառադարձության անճշտության պատճառով տվյալ թարգմանությունը հստակ չէ և ջատ դեպքերում բռնազբոսիկ է, իսկ ulabe «գնաց» բառը թարգմանված է «եկավ», այն դեպքում, երբ Տուշպայում պատրաստված կավե սալիկի վրա գրված արձանագրության մեջ երբեք հնարավոր չէր գրել «եկավ դեպի Մանա», այլ միայն՝ «գնաց դեպի Մանա»:

43 УКН, № 286, лс, տող 1—4 (արձանագրության լրացուցիչ հրատարակության մեջ), որտեղ բառացիորեն կրկնված են Ի. Դյակոնովի հրատարակած տեքստի տպագրական վրիպակներն ու սխալ վերծանումները:

44 УКН, № 286 («Вестник древней истории», 1971, № 3, с. 231). Հարկ է նշել, որ թարգմանության մեջ «արքայի» բառը պատահականորեն բաց է մնացել, այսինքն՝ «ավագ որդին Իշկուգուլյան» հատվածը պետք է լինեի «ավագ որդին Իշկուգուլյան արքայի», իսկ «դեպի Մանա երկիրը» կապակցությունը անհրաժեշտ էր թարգմանել «դեպի Մանա (երկիրը)», քանի որ բնագ-

Ռուսա II-ի տվյալ արձանագրության համապատասխան հատվածի ուսումնասիրությունը մեզ հանգեցրեց հետևյալ եզրակացություններին:

Նախ, հատվածի URU «քաղաք» գաղափարագիրը տվյալ կապակցության մեջ անտեղի է և ուրարտերենի լեզվական օրենքներով չի հիմնավորվում: Բացի այդ, արձանագրության լուսանկարը⁴⁵ այդպիսի վերժանման հիմք չի տալիս: Այնտեղ պարզապես գրված է ka, ինչպես այն հանդիպում է ալիելի ստորև՝ առջևի կողմի 3-րդ (¹A-ka-'a-a) և 12-րդ (^LUNIG · ŠID · DA-ka-I) սողերում և ետևի կողմի 5-րդ (^LŠI-pi-ka-a-né) և 7-րդ (¹Ū-bi-a-bi-i-ka-I) սողերում: Հետևաբար, տեղա է ոչ թե ¹Ru-sa-a URU ¹Ar-giš-t[e-ḫ]i-n[é] տնհասկանալի բառակապակցությունը, թարգմանված՝ «Ռուսայի քաղաքից Արգիշթիյան (որդու)» ձևով⁴⁶, որը ալիելի հակասական և իրարամերձ կարծիքների, ենթադրությունների ու տեղորոշումների տեղիք է տվել, այլ ¹Ru-sa-a-ka ¹Ar-giš-t[e-ḫ]i-n[é], այսինքն՝ «Ռուսայի-առջև Արգիշթիորդու» միանգամայն հասկանալի արտահայտությունը, որը հատուկ է ուրարտական արձանագրությունների լեզվական օրինաչափություններին: Օրինակ, te-qu-a-a-[e] (¹UDSar₃-du-ri-ka ¹Ar-giš-te₈-ḫi-né-e⁴⁷, այսինքն՝ «զգետոնեցնրանց Սարդուրի-առջև Արգիշթիորդու»⁴⁸, Այլ դեպքերում ka «առջև» բառը հանդիպում է kal նույնպես «առջև» ձևով: Օրինակ, te-qu-ú-a-le ¹Ar-gi-IŠ-ti-i-ka-I ¹Mi-nu-a-ḫi-né-ḷ-e⁴⁹, այսինքն՝ «զգետոնեցնրանց Արգիշթի-առջև Մինուալորդու»⁵⁰, կամ՝ [te-qu]-né (¹Ar-giš-ti-ka-I [¹Mi]-nu-a-ḫi-né-e⁵¹, այսինքն՝ «զգետոնեց Արգիշթի-առջև Մինուալորդու»⁵² և այլն:

Այնուհետև՝ ¹Šá-ga DUMU tar-a LUGÁL IŠ-qu-gu-ul-ḫi-e հատվածը, որը Ի. Դյակոնովը թարգմանել է որպես «Շագան»՝ ավագ որդին Իշկուգուլլան արքայի»⁵³, նույնպես չի համապատասխանում ուրարտերենի քերականության կանոններին: Նման թարգմանության դեպքում կպահանջվեր, որ բնագրի ¹Šá-ga անձնանվան փոխարեն վկայված լիներ ¹Šá-ga-né ձևը, որը, սակայն, չկա: Հետևաբար, հիշյալ հատվածում առկա DUMU գաղափարագիրը անհրաժեշտ է դիտել որպես նախորդ անձնանվան վերջավորություն, որը և իր մեջ կարող էր ամփոփել ցանկացած հոլովի ձևը: Ուստի, ¹Šá-ga DUMU տարանջատ բառերը միացնելով կստանանք ¹Šá-ga- DUMU, որի տակ կարող ենք հասկանալ ¹Šagabe «Շագալորդի» անձնանվան եզակի թվի ուղղական-երկրորդ հոլովով տրված ձևը՝ ¹Šagaḫine «Շագալորդին»: Ուստի, ¹Šá-ga-DUMU tar-a LUGÁL IŠ-qu-gu-ul-ḫe-e կարելի էլինի ըն-

րում «երկիր» բառը առանձին չի տրված: Տվյալ դեպքում ևս ulabe «զնաց» բայը սխալմամբ թարգմանված է «եկավ», այն դեպքում, երբ Գ. Մելիքիշվիլին ula- բայը միշտ էլ թարգմանում է «գնալ» (УКН, էջ 411, ինչպես նաև՝ «Вестник древней истории», 1971, № 4, с. 289):

⁴⁵ УПД, էջ 144 (XIV, № 1)։

⁴⁶ УПД, էջ 38։

⁴⁷ Н. Я. Марр, И. А. Орбели, Археологическая экспедиция 1916 г. в Ван, Пб., 1922 (այսուհետև՝ АЭВ), XI=CICH, XXXIV (հմտ.՝ УКН, № 155, С. առջ 21—22=HChI, № 103, § 4, I)։

⁴⁸ ՈւԱ, № 27, էջ 76։

⁴⁹ MLVE, V (հմտ.՝ УКН, № 127, IV, առջ 44—45=HChI, № 80, § 9, I)։

⁵⁰ ՈւԱ, № 22, էջ 63։

⁵¹ MLVE, V (հմտ.՝ УКН, № 127, IV, առջ 69=HChI, № 80, § 10, I)։

⁵² ՈւԱ, № 22, էջ 64։

⁵³ УПД, էջ 39։

կալել ոչ թե «Շագան» ավագ որդին Իշկուզուլյան արքայի», այլ՝ «Շագայորդին հզոր» արքան Իշկուզու-ուլխե (ցեղի)»:

Այսպիսով, ամբողջ հատվածը կարող ենք տառադարձել և թարգմանել հետևյալ կերպ. a-ku-ke MU ¹Ru-sa-a-ka ¹Ar-giš-[e-ḫ]i-n[é] ¹Šá-ga-DUMU tar-a LUGĀL Iš-qu-gu-ul--ḫe-e ú-la-b[é] ^{KUR}Ma-na-i-de ¹A-ka-a-a e-se-le₄ a-še <...>, այսինքն՝ «Հենց-ալդ-դույն տարում, (որ) Ռուսայի-առջև Արդիշթորդու, Շագայորդին հզոր՝ արքան Իշկուզու-ուլխե (ցեղի), գնաց դեպի-Մանա՝ Աքայա (=Աքավա) տեղն-իր (և) երբ <...>»: Հատվածի՝ նման տառագարձությունը և թարգմանությունը հնարավորություն է տալիս ենթադրելու, որ Իշկուզու-ուլխե կոչվող ցեղը կամ ցեղային միությունը գտնվել է կամ տեղափոխվել և բնակություն է հաստատել Մանայի տարածքում: Տեքստից կարելի է հետևեցնել, որ Շագայորդին Ռուսա II-ի դաշնակիցն է եղել, և նրա իշխանության կենտրոնը («տեղն-իր») գտնվում է Մանայի Աքայա (=Աքավա) կոչվող վայրում:

Հայտնի է, որ Ռուսա II-ի օրոք Մանայի տարածքում բացի կիմերական ցեղային միավորումներից կային երկու սկյութական ցեղային միավորումներ ևս: Դրանցից մեկի արքան (իմա՝ ցեղապետը) կոչվում էր Իշպաքա Սկյութացի (Iš-pa-ka-a-a ^{KUR}Aš-gu-za-a-a)⁵⁴, իսկ մյուսինը՝ Պարտաթուա՝ արքա Իշքուզայի (Pár-tā-tu-a LUGAL ^{KUR}Iš-ku-za-a-a)⁵⁵, Բ. Պիոտրովսկու ենթադրությամբ Պարտաթուան ամրացել էր Մանայի Զիրիա ամրոցում⁵⁶, բարեկամացել Ասորեստանի արքա Ասարխադդոնի հետ և, թերևս, ինչպես ենթադրում է Ի. Դյակոնովը, ամուսնացել էր նրա աղջկա հետ⁵⁷, ինչը կարելի է կուսահել սկսագիր աղբյուրների տվյալներից⁵⁸: Ինչ վերաբերում է Իշպաքային, ապա նրա մասին եղած տեղեկությունները այնքան էլ հստակ չեն: Մի բան պարզ է, սակայն, որ Մանայի տարածքում վերաբնակված այս երկու ցեղային միությունների առաջնորդները թշնամաբար էին տրամադրված միմյանց նկատմամբ: Ուրարտու—Ասորեստան անդիշում ու կատաղի մրցակցության պայմաններում, եթե Պարտաթուան Ասարխադդոնի դաշնակիցն էր և Իշպաքայի հակառակորդը, ապա, բնականաբար, Իշպաքան Ասարխադդոնի թշնամին էր և Ռուսա II-ի դաշնակիցը: Ուստի, կարելի է ենթադրել, որ միևնույն անձնավորությունը ուրարտական աղբյուրներում կոչվում էր Շագախե (Շագայորդի), իսկ ասորեստանյան աղբյուրներում՝ Իշպաքա:

Հատվածի քննությունը ցույց է տալիս, որ Ռուսա II-ը և Շագայորդին (իմա՝ Իշպաքան), իրոք, դաշնակիցներ են: Իսկ սա նշանակում է, որ ուրարտացիները Ռուսա II-ի ժամանակ Հայկական լեռնաշխարհի հարավ-արևելքում և Իրանական սարահարթի հյուսիս-արևմուտքում դեռևս շարունակում էին ակտիվ գործողություններ ծավալել ասորեստանցիների դեմ և պահպանել եթե ոչ ամբողջ Մանայի, ապա գոնե նրա մի մասի վրա ունեցած իրենց երբեմնի գերիշխանությունը: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Իշպաքա—Պարտաթուա մրցակցության ժամանակ՝ մ. թ. ա. 673 թ. Իշպաքան զոհվում է⁵⁹, ապա կարելի է ենթադրել, որ մոտավորապես այդ նույն թվականին

⁵⁴ АВИИУ, № 65, ժան. 9.

⁵⁵ J. A. Knudzon, Assyrische Gebete an den Sonnengott für Staat und königliches Haus aus der Zeit Asserhaddons, I, Leipzig, 1893, № 29, Հմմտ. АВИИУ, № 68 (г, № 19).

⁵⁶ ВЦ, էջ 255.

⁵⁷ И. М. Дьяконов, История Мидии, М.—Л., 1956, с. 246, 272, 280.

⁵⁸ АВИИУ, № 68 (г, № 19).

⁵⁹ И. М. Дьяконов, История Мидии..., с. 272, Ընդ որում, Ի. Դյակոնովի կարծիքով Իշպաքա անվան իրանական արտասանությունը կարող էր լինել Շպաքա կամ Սպաքա (АВИИУ, № 65, ժան. 9), ավելի կոնկրետ՝ *Spākšya>(I)spakāi(a), որը կարող

էլ ուրարտացիներին՝ Մանայի վրա ունեցած երբեմնի գերիշխանությունը խիստ թուլանում է կամ իսպառ վերանում:

Նկատի ունենալով Պարտաթուալի և Իշպաքալի (իմա՝ Շագալորդու) վերաբերյալ սեպագիր աղբյուրների տվյալները, այստեղ կցանկանայինք առաջ քաշել զուտ գիտական մի վարկած, որի հաստատումը, անկասկած, նոր լույս կսփռեր հայ ժողովրդի պատմության որոշ մութ հարցերի վրա:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պարտաթուան (Paratua), այն է՝ հունական աղբյուրների Պրոտոթիեսը (Πρωτοθής)⁶⁰, սկյութական առաջնորդների մեջ առաջինը հասավ արքայական տիտղոսի⁶¹, ինչպես նաև այն, որ հայկական ավանդական պատմության տվյալների համաձայն հայ նախարարների մեջ առաջինը արքայական տիտղոսի է արժանանում Պարույրը («Պարույր՝ առաջին ի Հայս թագաւորէ», «չինքն և զքաջն մեր նախարար յանդուցանէ զՊարույր, թագաւորութեան շուք՝ և ձև նմա խոստանալով») ⁶², կարելի է եզրակացնել, որ, թերևս, Պարտաթուա-Պրոտոթիեսը միևնույն Պարույրն է, ինչպես այդ ենթադրում է Գ. Ղափանցյանը⁶³, եթե նկատի ունենանք նաև այն, որ Պարտաթուա-Պրոտոթիեսը, իրոք, սկյութացի էր և կարող էր սկյութացու որդի համարվել, ապա Պարույրը ևս, փաստորեն, կոչվում էր մոտավորապես նույն ձևով՝ «հսկայի որդի», սկյութացու որդի» («Պարույր, որդի Սկայորդ-ւոյ») ⁶⁴, որի վրա և հենց մատնացույց են անում Գ. Ղափանցյանը⁶⁵ և Բ. Պիրոսովսկին⁶⁶, մանավանդ որ Գ. Ղափանցյանը Պարույր Սկայորդու անունը բերիւնցնում է Պարտաթուա-Պրոտոթիեսի անունից⁶⁷: Եթե նկատի ունենանք նաև այն, որ հայկական ավանդական պատմության արքայական ցանկերում հա-

էր ծագել spaka («շուն») բառից (И. М. Дьяконов, История Мидии..., էջ 245, ծան. 5), քանի որ մեզացիները լեզվում շունը հենց այդպես էլ կոչվում է. *šōna xalēsuai spāka* *Mīdi* (Her., I, 110):

⁶⁰ Her., I, 103:

⁶¹ АВИИУ, № 68 (г, № 19):

⁶² «Մ ո վ ս ի ս ի հ ո ռ ե ն ա ց լ ո յ Պատմութիւն Հայոց», Տիգրս, 1913, էջ 64, 65:

⁶³ Գ. Ա. Ղափանցյան, Արա Դեղեցկի պաշտամունքը, Երևան, 1944 (կազմի վրա՝ 1945), էջ 84—85:

⁶⁴ Մ ո վ ս ի ս հ ո ռ ե ն ա ց լ ո յ, էջ 68: Ընդ որում, անհրաժեշտ է նշել, որ հայ պատմագրության տվյալների համաձայն արքայացանկերում հանդիպող բազմաթիվ իշխանավորներ, որոնք վկայված են Անուշավանի և Պարույրի միջև, դիտվում են որպես օտարներ և ոչ-հայեր, այդ թվում նաև Կայպակն ու Սկայորդին, և Պարույրն է, որ «զանազգիսն ի բաց լքեալ հերքեալ՝ և զնահապետութիւն ազգի իւրոյ վերստին նորոգեալ պայազատէր» («Յ ո վ հ ա ն ն ու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն Հայոց», Մոսկվա, 1853, էջ 14): Գ. Ղափանցյանը, անշուշտ, հենց այս վկայությունը նկատի ունենալով, հեղինակի ասածը սխալմամբ վերագրում է նաև Պարույրին և եզրակացնում, որ «Պարույր Սկայորդին այլ ցեղից էր, ու բնիկ հայկական ծագումով» (Գ. Ա. Ղափանցյան, Ուրարտուի պատմություն, Երևան, 1940, էջ 217): Հակառակ Գ. Ղափանցյանի տեսակետի, միանգամայն այլ կարծիք է հայտնում Գ. Զահուկյանը, ըստ որի Սկայորդի անձնանունը ծագում է հ.-հ. *skāl- «լուսավոր» արմատից կազմված Σκαλοցեղանունից (Գ. Բ. Զահուկյան, Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, Երևան, 1970, էջ 67):

⁶⁵ Գ. Ա. Ղափանցյան, Ուրարտուի պատմություն..., էջ 84—85:

⁶⁶ Б. Б. Пиотровский, Происхождение армянского народа, Ереван, 1945, с. 18.

⁶⁷ Г. А. Капанцян, Хайаса—колыбель армян, Ереван, 1947 (կազմի վրա՝ 1948), с. 246: Գ. Ղափանցյանը, սակայն, այնքան էլ ճիշտ չէ, երբ հուսարենի հիմքի վրա կազմում է Protot- կամ Prodo- ձևերը և վերջինս հապլորդիայով վերածելով Prōd-ի, բխեցնում է Projr>Parojr անձնանունը: Հ. Աճառյանը Պարույր (Պարույր) անձնանունը բխեցնում է պարուր բառից, որը նշանակում է «շրջան, պտույտ» (Հ. Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, IV, Երևան, 1948, էջ 232), որը, իհարկե, ճիշտ համարել չի կարելի:

վաքված և ի մի են բերված բոլոր այն իշխանավորների անունները, որոնք երբևէ տիրել են Հայկական լեռնաշխարհի որևէ մասում կամ Մեծ Հայքի մեջ երբևէ մտած մի տարածքում, ինչպես ենթադրում է Բ. Պրոտրովսկին⁶⁸, ապա կարող ենք հզրակացնել, որ Պարտաթուա-Պրոտոթիես-Պարույր գիծը կարող է, թերևս, ճշմարիտ լինել:

Մեր կարծիքով, այս ենթադրությունը կարելի է հիմնավորել մեկ այլ համանման փաստարկով, որը հետևյալն է: Վերևում ասվեց, որ Պարտաթուա-յի հակառակորդը և Ռուսա II-ի դաշնակիցը Մանայի տարածքում հաստատված մեկ այլ սկյութական ցեղալիք միության առաջնորդն էր, որը կոչվում էր Իշպաքա (Išpaka): Բնականաբար, արխաիկ սեպագրության ջատագով որևէ մի գրագիր, եթե այս անվան առաջին սեպագիր վանկը իՏ գրելու փոխարեն գրեր իՏ₅, ապա արխաիզմից հետո կանգնած մեկ այլ գրագիր Իշպաքա (Išpaka) անվան փոխարեն կկարդար Քապաքա (Kapaka): Բնականաբար, նման ձևը մուս.ք գործելով մեկ այլ քաղաքակրթության բնագավառ, ասենք՝ արամեական, հետագայում ինչ-ինչ ձանապարհներով հայկական ավանդական պատմության արքայացանկերում հանդես կգար մոտավորապես նման մի ձևով: Այս իսկ պատճառով էլ հայկական ավանդական պատմության արքայացանկերում հանդիպող Կայպակը⁶⁹ կամ Կապակը⁷⁰, որը հիշվում է հենց Պարույրի հայր Սկայորդուց առաջ, թերևս, կարող է միևնույն իշպաքան լինել: Հետևաբար, հայ պատմագրության Կայպակ-Սկայորդի-Պարույր շարքը համընկնում է սեպագիր աղբյուրների իշպաքա-Շագայորդի-Պարտաթուա շարքին, այն տարբերությամբ միայն, որ ասորեստանյան աղբյուրների իշպաքան ուրարտական աղբյուրների Շագայորդին է, որը հայ պատմագրության մեջ երկատվել և դարձել է երկու անձնավորություն՝ հայր ու որդի, այն է՝ իշպաքա-Քապաքա-Կայպակ (Կապակ) և Շագախե-Շագայորդի-Սկայորդի⁷¹:

Հետևաբար, Հայաստանի սեպագիր շրջանի պատմության համապատասխան դրվագները շարադրելիս, կարծում ենք, անհրաժեշտ է անպայման նկատի ունենալ վերոհիշյալ դիտողությունները, որոնք ուրարտական գաղափարագիր անձնանունների ուսումնասիրության նեղ շրջանակներից դուրս գալով ինչ-որ չափով լույս են սփռում հայ ժողովրդի պատմության մոլթ ու կնճռոտ որոշ հարցերի ուսումնասիրության վրա:

⁶⁸ Б. Б. Плотровский, Происхождение армянского народа..., с. 17.

⁶⁹ Մ ո վ ս է ս հ ո Ր Ե Ն ա ց ի, էջ 63, Մ ո վ ս է ս Կ ա դ ա ն կ ա տ ու ա ց ի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Երևան, 1983, էջ 41:

⁷⁰ «Մեծին Վարդանայ Բարձրաբերդեցւոյ Պատմութիւն տիեզերական», Մոսկվա, 1861, էջ 22:

⁷¹ Հայկական արքայացանկերի՝ նման անհայտ ու անծանոթ անունների առատությունը ներկատի ունենալով, հայ պատմագրությունը մատնացույց է անում նաև դրանց աղբյուրը, կարծեք, փարատելու համար այն կասկածները, որ երբեք կարող են ծագել այդ կապակցությամբ. «Ապա եթէ ասիցես, ուստի՝ մեզ և զնախնացն մերոց գիտել զանուանս այսպէս, իսկ զբաղմաց և զգործս՝ ասեմ. ի հնոցն դիւանաց Քաղդէացւոց, Ասորեստանայց և Պարսից, վասն մտելոց անուանց և գործոց նոցա ի քարտէս արքունի, իբրև գործակալաց և վերակացուաց աշխարհիս ի նոցանէ կացելոց և մեծաց կողմնակալաց» (Մ ո վ ս է ս հ ո Ր Ե Ն ա ց ի, էջ 66): Ընդ որում, անհրաժեշտ ենք համարում նշել, որ Գ. Ղափանցյանը Սկայորդու անվան մասին խոսելիս (Գ. Ա. Ղ ա փ ա ն ց յ ա ն, Ուրարտուի պատմություն..., էջ 217, ծան. 1) գտնում է, որ Սկայորդու անունը եթե ուրարտերեն վկայված լիներ, ապա այն կլիներ *Šakaxi (իմա՝ *Šaqaqe), մի հանդամանք, որ ցույց է տալիս մեծ ուրարտագետի մտքի խորաթափանցությունը:

УРАРТСКИЕ ИДЕОГРАФИЧЕСКИЕ АНТРОПОНИМЫ

ОВАНЕС КАРАГЕЗЯН

Резюме

В клинописных языках наряду со слоговыми написаниями антропонимов часто встречаются также их идеографические написания. В урартских источниках такими являются следующие имена:

1) 'TUR-Tata—«Младший Тата», из клинописных таблесток Кармир-блур, что не совсем точно было переведено как «TUR-тата», т. е. идеографический антропоним с фонетическим компонентом, наряду с 'Tata «Тата», встречающийся в тех же клинописных таблестках из Кармир-блур, а также в армянской историографии в имени князя Тат Камсаракан (Բաթ Կաճաւրապետ), или то же имя с уменьшительной частицей—Татул Камсаракан (Բաթու Կաճաւրապետ).

2) 'Haldi-ERÈ—«Халдибура», также из клинописных таблесток Кармир-блур, окончание которого (ERÈ, со слоговым написанием buga) встречается и в имени царя страны Убурда— 'Iš[.] lubuga «Иш (.) лубура», упоминаемого в Хорхорской летописи Аргиште I (786—764 гг. до н. э.).

3) 'Šaga-DUMU—«Шагахе», т. е. «сын Шага» (по-армянски оно звучало бы «Шагайорди», т. е. «Скайорди») из клинописных таблесток Вана, встречающееся в очень непонятном отрывке, что даже в новейших урартоведческих исследованиях было переведено по-разному: «в акукі год <...> Сагаштара, царь Ишкугулхи, пошел в (на) страну Мана. Ата <...>» (Г. Меликишвили), «в год (?) <...> Руса Аргиштид, человеку Шага'тара страны Ишкугулу. <...> в стране Мана. На месте (?) Ата'а, страна <...>» (Ф. Кениг), «Год, в который из города Русы, Аргиштиева (сына), Шага, сын старший царя ишкугульского, пришел в Ману на Ака'и место, когда <...>», с заключением о том, что «сын царя этой страны, очевидно, был на урартской службе в качестве наместника» (И. Дьяконов), «Год, в который из города (царя) Руса, (сына) Аргишти, Шага, сын старший ишкугульского, пришел в страну Мана на место Ака, когда <...>» (Г. Меликишвили, вторично).

Вопреки указанным мнениям, на наш взгляд, упомянутый отрывок транскрибируется следующим образом: a-ku-ke MU 'Ru-sa-a-ka 'Ar-giš-t[e-h]i-n[é] 'Ša-ga-DUMU tar-a LUGÁL Iš-qu-gu-ul-ḫe-e ú-la-b[é] KURMa-pa-i-de 'A-ka-'a-a e-se-le₄ a-še <...> и переводится: «Именно-в-том-же году, (что) перед-Русой Аргиштидом, Шагахе мощный, царь (племени) Ишкугу-улхе, пошел в-(страну)-Мана, на свое-место Ака'а (возможно чтение также: Акава) (и) когда <...>».

Такое понимание отрывка указывает, что если страна Ишкугулу, упоминаемая в Хорхорской летописи Аргиште I и в наскальной надписи из Мармашена того же царя, находится севернее Ширака, то племя Ишкугу-улхе находится в стране Мана, южнее оз. Урмия. Царь (т. е. вождь) этого племени Шагахе, союзник Русы II (685—645 гг. до н. э.), не кто иной, как известный в ассирийских источниках Ишпака, один из вождей скифских племен, враг Ассирии и друтого скифского вождя Партагуа, погибший в 673 г. до н. э.

Архаическое написание имени Ишпака (т. е. взамен обычного ¹Is-ра-ка архаическое написание ¹Is₅-ра-ка), которое, вероятно, в действительности имело место, в последующий период привело к ошибочному чтению имени как Капака (¹Ка-ра-ка), что иной раз могло передаваться как Капак (Վապակ) или Кайпак (Կապակ), что упоминается в армянской историографии.

Следовательно, одно и то же имя передается двумя формами: Ишпака (по-ассирийски) и Шагахе (по-урартски), т. е. Кайпак (Վապակ) и Скайорди (Սկայորդի) по армянской исторической традиции. Если прибавить к этим и имя другого скифского вождя в стране Мана, союзника Ассирии и прогивника вождя Ишпака—Партатуа, который в армянской историографии, несомненно, известен под именем Паруйр (Պարայր), так как Parjatua=Πρωτότης > *Parótot > *Paróyot > Paróyr (между прочим, они оба, и Партатуа, и Паруйр, являются первыми венценосцами, первый—среди вождей скифских племен, второй—среди армянских), то получим следующие две параллели: Ишпака—Шагахе—Партатуа и Кайпак—Скайорди—Паруйр.

Таким образом, изучение урартских идеографических антропонимов приводит нас к следующему заключению: имена вождей скифских племен, находящихся в стране Мана, Ишпака и Партатуа, вошли в царские списки армянской историографии, возможно, через арамейский (в виде Кайпак, Скайорди, Паруйр).

Следовательно, при изложении истории армянского народа в указанный период следует учесть также вышеизложенные выводы.